

➤ **Ն. Հարտման.-**

Ինչպես նշեցինք (Էջ 108), Ն. Հարտման Նոր-Կանտականության (Neo-Kantianism) Մարբուրգեան դպրոցի հետևորդ մըն էր, որմէ հեռանալէն ետք կ'որոշեցրէ *հիմնական Էաքանություն* (Fundamental Ontology) փիլիսոփայական ուղղութիւնը, կեցութեան եւ ճանաչողութեան հանդէպ Նոր, աւելի առարկայական-իրապաշտական դիրքաւորումով:

Բարոյագիտական իր գլխաւոր երկը կը նկատուի 1925 թուականին հրատարակուած՝ «*Բարոյագիտութիւն*» (գերմ. բնագիր՝ „Ethik“) երկը, ուր Ն. Հարտման կը միանայ Մ. Շելլերի երեւութաբանական հիմք ունեցող՝ նիւթական արժէքի բարոյագիտութեան: Ն. Հարտման, համակարծիք է Մ. Շելլերի հետ եւ երկուքով կը մերժեն Կանտի բարոյագիտական անպայմանական հրամայականը (Categorical Imperative), ի նպաստ իրենց՝ նիւթական արժէքի բարոյագիտութեան:

Ն. Հարտման մեծ կարեւորութիւն կու տար Նաեւ մարդու ազատութեան, առանց որուն կարելի չէ բարոյականութիւն մը պատկերացնել:

2. ՄԵՏԱ-ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

20-րդ դարու ընթացքին, Լեզուա-վերլուծական փիլիսոփայութեան զարգացումով, յառաջ կու գար *Մետա-բարոյագիտութիւնը* (Meta-Ethics, Մետա-Էթիկա), որ կը քննարկէ բարոյական արտայայտութիւններու՝ ընդհանուր, տրամաբանական, իմաստաբանական եւ գործնապաշտական կառոյցները: Անխախտ բարոյական արժէքները, որպէս բարոյագիտութեան բովանդակութիւն ա'լ ժամանակավրէպ դարձած էին. փոխան արժէքներու դրութեան, բարոյագէտ-փիլիսոփաներու հետաքրքրութեան առարկայ կը դառնար լեզուական վերլուծումը: Այստեղ, քննարկումի կ'ենթարկուէին բարոյական կանոններն ու անոնց կայունութիւնը: Փոխան վարմունքի բարոյական արժէքւորման, կը շեշտուին բարոյական արժէքներու կիրառման պահանջները, անոնք ըլլային իրաւացի կամ անիրաւ:

«*Մետա-բարոյագիտութիւն*» նիւթը, քննարկումի իր չորս ոլորտներով (լեզուա-վերլուծական, բարոյական համոզումներու, Էաքանական եւ իմացաբանական), ինչպէս Նաեւ այլ մանրամասնութիւններով, կը գրաւէ աշխատասիրութեանս իւրայատուկ Մաս – 3ը (տե՛ս Էջ 126 – 138):

3. ԸՆԿԵՐԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1960-ական թուականներուն, ճարտարարուեստի երկիրներու մէջ տեղի ունեցած քաղաքացիական իրաւունքներու շարժումը, Վիետնամի պատերազմի դէմ բողոքները եւ ուսանողներու («1968-ի սերունդ», տե՛ս Էջ 113-ի ծանօթագրութիւնը) ընկերա-քաղաքական ապստամբութիւնը բարոյագիտութեան կու տան աւելի ընկերային ու քաղաքական բովանդակութիւն, արդարեւ կը յառա-